ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N°—Ե -03/91

Գ. Շիրակամուտ

«16» 04. 2021թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաչատրյան

Ներկայացնում եմ Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 9-Ա ,10-Ա,11-Ա,12-Ա,13-Ա և 14-Ա որոշումները:

Առդիր 9էջ:

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 12" ապրիլի 2021 թվականի N9-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ. ԱՊՐԻԼԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2021թ. ապրիլի 12-ի հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1. Շիրակամուտի համայնքի սեփականություն հանդիսացող 06-087-0123-0015 ծածկագրով 0,4042 հա հողամասը աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին
2. Շիրակամուտ համայնքի 2021 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին:
3. Ա.Երանոսյանին պատկանող կիսակառույցին անհատույց շինարարության թույլտվություն տրամադրելու մասին
4. Ս.Իվանյանին պատկանող կիսակառույցին անհատույց շինարարության թույլտվություն տրամադրելու մասին
5. Դրամական օգնություն հատկացնելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 12" ապրիլի 2021 թվականի N10-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-087-0123-0015 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,4042 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. 286-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 06-087-0123-0015 ծածկագրով , 0,4042 հա մակերեսով 4-րդ կարգի արոտավայրը մեկ լոտով աճուրդ վաճառքով օտարելու: Մեկնարկային գինը՝ 848900 ՀՀ դրամ, մուտքագրության վճարը՝ 2000 ՀՀ դրամ, նախասվճարը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով, աճուրդի քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ՝ ներառյալ սերվիտուտ չկան:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /1 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,, 12" ապրիլի 2021 թվականի N11 -Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ Ի-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի՝ 2021 թվականի բյուջեի Ի-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին ներկայացրած հաղորդումը ,Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է .

1.Ընդունել ի գիտություն Շիրակամուտ համայնքի 2021 թվականի բյուջեի Ի-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հավելված
Շիրակամու համայնքի ավագանու
12 ապրիլի 2021թ. N 11-Ա որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Շիրակամուտ համայնքի 2021թ. Բյուջեն 1-ին եռամսյակի կտրվածքով կատարվել է ա/եկամուտների գծով 98,89 %-ով, նախատեսված 17064.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 16876.2 հազար դրամ:
Սեփական եկամուտները /հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ հիմնական միջոցների իրացումից/ նախատեսված 2362.3 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 2160.6 հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով հատալվել է 91.46%-ով: Պաշտոնական դրամաշնորհների գծով /ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ/ նախատեսված 14701.7 հազար դրամի դիմաց պաստացի կազմել է 14715.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100%:
բ/ Ծախսերի գծով կատարվել է 87.18%- ով նախատեսված 17064 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 14877 հազար դրամ:

1.ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Վարչական բյուջեի եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 17064.0 հազար դրամի դիմաց կազմել են 16876.2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 98.8 %:

1.1 Հողի հարկ

Հողի հարկի գծով 3 ամսվա համար նախատեսված 715.3 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 400.3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 55.9%:

1.2. Գույքահարկ

Գույքահարկի գծով 3 ամսվա համար նախատեսված 622.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 1046.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 168.2%:

1.3. Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով 3 ամսվա համար նախատեսված 90.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 29.2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 32.4%:

1.4. Այլ եկամուտներ

Այլ եկամուտների գծով 3 ամսվա համար նախատեսված 935.0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 599.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 64.06 %:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումներ չեն կատարվել:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Վարչական բյուջեի ծախսերը 3 ամսվա համար նախատեսված 17064 հազար դրամի դիմաց կատարվել է 14877 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 87.1%: Ըստ գործառնական դասակարգման և ծրագրերի ծախսերը կատարվել են հետևյալ կերպ՝

/Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 80.46%,

/Տնտեսական հարաբերությունների գծով՝ 125.5%,

/Շրջակա միջավայրի պահպանություն ՝ 82.5%,

/կոմունալ տնտեսություն՝ 116,3%,

/Կրթություն՝ 119 %,

/Սոցիալական պաշտպանություն՝ 96%,

3. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Ֆոնդային բյուջեով 3 ամսվա համար նախատեսված ծախսերը կատարվելեն 62.60 % - ով: Տնտեսական հարաբերություններով մուտքագրվել է 301.3 հազար դրամ:

Շիրակամուտ համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հաշվապահ՝ Ա.Ժամակոչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 12" ապրիլի 2021 թվականի N12-Ա

Ա.ԵՐԱՆՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 25.01.2019թվականի, թիվ 01/101.1/00414-19 գրությունը և հաշվի առնելով,որ անավարտ բնակելի տների շինարարական աշխատանքները իրականացվելու է <<Ֆուլեր տնաշինական կենտրոն>> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից,որը շահույթ չի հետապնդում, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Շիրակամուտ համայնքի բնակիչ , շահառու՝ Արգամ Վանիկի Երանոսյանի անավարտ բնակելի տան շինարարական աշխատանքները սկսելու համար 3-րդ փողոցի թիվ 3 հասցեի վրա գտնվող՝06-087-048-024 կադաստրային ծածկագրով 0,038 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա կառուցված կիսակառույցին անհատույց տրամադրել շինարարության թույլտվություն:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 12'' ապրիլի 2021 թվականի N13-Ա

Ս.ԻՎԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 25.01.2019թվականի, թիվ 01/101.1/00414-19 գրությունը և հաշվի առնելով,որ անավարտ բնակելի տների շինարարական աշխատանքները իրականացվելու է <<Ֆուլեր տնաշինական կենտրոն>> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից,որը շահույթ չի հետապնդում, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Շիրակամուտ համայնքի բնակիչ , շահառու՝ Սերժիկ Վալոդյայի Իվանյանի անավարտ բնակելի տան շինարարական աշխատանքները սկսելու համար 23-րդ փողոցի թիվ 34 հասցեի վրա գտնվող՝06-087-074-002 կադաստրային ծածկագրով 0,117 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա կառուցված կիսակառույցին անհատույց տրամադրել շինարարության թույլտվություն:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 12'''ապրիլի 2021թվականի N14-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի ,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին'' թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի 2021թ. բյուջեի 10.7.1 դասակարգման 4729 հոդվածից հատկացնել դրամական օգնություն յուրաքանչյուրին երեսուն հազար դրամ ՝համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ավագանու
2021 թվականիապրիլի12 -ի N15-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Պապիկյան Լենա Ս. - երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/
2. Գրիգորյան Անահիտ Խ. - երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/
3.Հակոբյան Ալինա Զ. - երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԵՐԱՆՈՍՅԱՆ